Արձանագրություն N 4

«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ

25.11.2019թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Յարմալոյան, Ա. Թումանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր մասնակիցները հրավիրվել էին գնային առաջարկի նվազեցման շուրջ բանակցությունների, սակայն ոչ մի մասնակից սահմանված ժամկետում չի ներկայացել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/13» ծածկագրով գնման ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ին:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 08.11.2019թ. կատարված հարցման վերաբերյալ 12.11.2019թ. տրվել է տեղեկատվության, որի համաձայն «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն 4 167 118 ՀՀ դրամի չափով:

«ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից Անդրանիկ Ասլանյանի աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերը (աշխատանքային պայմանագիր և նմանատիպ աշխատանքների կատարումը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները) բացակայում են:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

3. «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին ծանուցել՝ ծանուցումը ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացում շտկել նշված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովին ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների

կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից անհամապատասխանությունը շտկելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ Սպիտակի համայնքապետարանի շենքում:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Ն. Յարմալոյան

_____ Ա. Թումանյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան